Հաստատում եմ

Տնօրեն՝ _____ Մ.Առուստամյան

31.08.2022թ.

«Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան և

177 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

2022-2023ուստարվա

# «Ճանաչի՛ր հայրենիքդ»

խմբակի հեղինակային տարեկան ծրագիր

Ուսուցիչներ՝ Լ.Հովհաննիսյան (աշխարհագրության ուսուցիչ)

Ա.Կրբաշյան (պատմության ուսուցիչ)

Հ.Պետրոսյան (Հայոց եկեղեցու պատմության ուսուցիչ)

--2022-2023--

# Նպատակ

1.Ձևավորել սովորողի աշխարհաճանաչումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:

2.Նպաստել սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացմանը:

3.Նպաստել ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

4.Նպաստել ֆիզիկական դաստիարակությանը:

5.Արժեհամակարգի ձևավորում:

6.Գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակություն:

7.Զուգակցել տեսականն ու գործնականը:

8.Նպաստել հայրենասիրության և ազգասիրության զարգացմանը:

9. Սերմանել հայրենաճանաչության զգացում :

10.Ծանոթացնել պատմամշակութային կոթողներին:

11.Դաստիարակել բնապահպանական կրթություն:

12. Նպաստել բնական և մշակութային ժառանգության պահպանմանը:

# Խնդիրներ

1.Հիմնական մասնակիցներով գործուն (դինամիկ) խմբի ձևավորում:

2.Տուրիստական խմբի ձևավորում:

3.Անհրաժեշտ պարագաների առկայություն:

4.Արշավի քարտեզների կազմում:

# Վերջնարդյունք

1.Տարբերակել ազգային և համամարդկային մշակութային կոթողները:

2.Կատարել պատմամշակութային վերլուծություններ:

3.Մեկնաբանել և վերլուծել պատմական իրադարձությունները:

4.Կարողանալ ուսումնասիրել և մեկնաբանել զանազան քարտեզներ՝ զարգացնելով հետազոտական հմտություններ:

5.Կարողանա ձևավորի հոգատար վերաբերմունք իր ընտանիքի,ազգի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:

6. Գնահատի ազգային, հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:

7. Գնահատի քրիստոնեական արժեհամակարգի դրսևորումները տարբեր հասարակություններում:

8.Հետազոտի և ձևավորի պատմական աղբյուրներ ընթերցելու և վերլուծելու հմտություն:

9.Ձևավորի զանազան վստահելի պատմական աղբյուրներ և տեքստեր որոնելու հմտություն:

10.Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր տարբեր մեդիա հարթակներից՝ ձևավորելով հետազոտական հմտություն:

11.Վերլուծելով հայ ժողովրդի ծաքումնաբանությունը, մշակույթը, տոներն ու ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:

12.Զարգացնի հոգատար և հարգալից վերաբերմունք սեփական ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ:

13.Ուսումնասիրի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր, ձևավորի բանիմաց վերաբերմունք հասարակության արժեհամակարգի վերաբերյալ, որն ուղղորդումն էր հայ ժողովրդի ինքնությունը պահպանելու ճանապարհին:

14.Գիտակցի ՀՀ աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից բխող առավելություններն ու սահմանափակումները և դրա վերաբերյալ ունենա սեփական դիրքորոշում:

15.Գիտակցի իր հայրենիքի բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման պահպանության և վերականգնում կարևորությունը:

16.Կատարել քարտեզագրում, երթուղու մշակում(արշավներ):

17.Ներկայացնել ՀՀ զբոսաշրջության զարգացման արդի միտումները:

***Հատկացված ընդհանուր ժամաքանակ՝***

աշխարհագրություն -շաբաթական 2 ժամ (տարեկան 68 ժամ)

պատմություն-շաբաթական 2 ժամ (տարեկան 68 ժամ)

հայոց եկեղեցու պատմություն- շաբաթական 2 ժամ (տարեկան 68 ժամ)

## Բովանդակություն

Ըստ թեմատիկ պլանի՝ նյութը բաժանվում է աշխարագրության, պատմության, հայոց եկեղեցու պատմության ուսուցիչների միջև, որոնք կազմում են մեկը մյուսի շղթայական շարունակությունը: Օրինակ՝ ընտրվել է ուսումնասիրության համար Արմավիրի մարզը, աշխարհագրության ուսուցիչը շեշտը դնում է աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, բնության հուշաձանների և քարտեզագրման վրա: Պատմության ուսուցիչը շեշտը դնում է Արշակունիների արքայատոհմի՝ Խոսրով Բ-ից Տրդատ Գ, պարսկահայ հարաբերություններ և քրիստոնեության ընդունումը: Հայոց եկեղեցու ուսուցիչը շեշտը դնում է եկեղեցական կառույցների, նրանց կառուցվածքի և պատմության վրա:

Կատարում են բոլոր նախագծային հետազոտական աշխատանքները, վերջնարդյունքն ամփոփվում է արշավի միջոցով՝ տեսականի և գործնականի համակցմամբ: Կատարվում են նկարահանումներ (տեսանյութ և ֆոտո), դրանք ներկայացվում են դպրոցի տարեվերջյան հաշվետվության ժամանակ:

# «Ճանաչի՛ր հայրենիքդ»

Եթե ինձ հարցնեին, թե աշխարհիս երեսին որտեղ է այն վայրը, որտեղ կարելի է հանդիպել այսքան հրաշքների, ես կանվանեի Հայաստանը: Ակամայից զարմանում ես, որ այդ փոքրիկ հողակտորի վրա կարելի է հանդիպել այնպիսի հուշարձանների ու մարդկանց, որոնք կարող են ամբողջ աշխարհի զարդն ու հպարտությունը լինել:

*Ռոքուել Քենթ*
*Ամերիկացի գրող և նկարիչ*

Մեծն Ռաֆֆին ասել է .

<<Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն>>



# Թեմատիկ պլան

| N | ԹԵՄԱ | ԺԱՄ | ՈՒՍՈՒՑԻՉ |
|---|---|---|---|
| I | | | |
| 1. | Ինչ է տուրիզմը, էությունն ու կառուցվածքը | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 2. | Զբոսաշրջության տեսակները և ձևերը | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 3. | ՀՀ տուրիստական տարածաշրջանները | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 4. | Տուրիստական երթուղիների մշակում Երևանից դեպի մարզեր | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| II | | | |
| 1. | Նախապատրաստական աշխատանք | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 2. | Խոսքային մեթոդով ծանոթացնել Կոտայքի մարզի աշխարհագրական դիրքին,բնակլիմայական պայմաններին: | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 3. | Ծանոթացնել բնական հուշարձանների հետ և դրանց բնութագիրը քարտեզագրում, երթուղու մշակում: | 8 | Հովհաննիսյան Լ. |
| 4. | Ծանոթացնել պատմամշակութային հուշարձանների հետ/Գառնի, Գեղարդ / : | 8 | Կրբաշյան Ա. 3 ժամ<br>Պետրոսյան Հ. 5 ժամ |
| 5. | Գառնի/հեթանոսություն, Արշակունիներ/ Գեղարդ /քրիստոնեություն/ | 9 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 3 ժամ<br>Պետրոսյան Հ. 4 ժամ |
| 6. | Շրջագայություն Երևան-Կոտայքի մարզ –Գառնի-Գեղարդ: | | |
| III | | | |
| 1. | Նախապատրաստական աշխատանք | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 2. | Երևան քաղաքի առաջնային դերը միջազգային զբոսաշրջության զարգացման գործում | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 3. | Երևանի տեսարժան վայրերն ու պատմամշակութային հուշարձանները | 10 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 4 ժամ<br>Պետրոսյան Հ. 4 ժամ |
| 4. | Երևանի կանգուն և գործող եկեղեցիները | 8 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա .3 ժամ<br>Պետրոսյան Հ. 3 ժամ |
| 5. | Քայլարշավ <<մեկ օրվա յոթ եկեղեցիներ>> | | |
| 6. | Այց Էրեբունի- Երևան, Վանի թագավորություն: Երևան քաղաքի պատմության թանգարան: | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| IV | | | |
| 1. | Նախապատրաստական աշխատանք | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 2. | Ծանոթացնել Արմավիրի մարզի աշխարհագրական դիրքին, բնակլիմայական պայմաններին | 8 | Հովհաննիսյան Լ. |
| 3. | Ծանոթացնել բնական հուշարձանների հետ և դրանց բնութագիրը քարտեզում, երթուղու մշակում | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ<br>Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 4. | Ծանոթացնել պատմամշակութային հուշարձանների հետ / Սբ. Գայանե, Հռիփսիմե տաճար, Շողակաթ, Սբ Էջմիածին տաճար, Սբ. Աստվածածին/ | 8 | Կրբաշյան Ա. 4 ժամ<br>Պետրոսյան Հ. 4 ժամ |
| 5. | Տրդատ III , Հռիփսիմյաց կույսեր: | 8 | Կրբաշյան Ա. 4 ժամ<br>Պետրոսյան Հ. 4 ժամ |
| 6. | Շրջագայություն Երևան-Արմավիր մարզ քայլարշավ Սբ. Գայանե, Հռիփսիմե տաճար, Շողակաթ, Սբ Էջմիածին տաճար, Սբ. Աստվածածին: | | |
| V | | | |
| 1. | Նախապատրաստական աշխատանք | 6 | Հովհաննիսյան Լ. 2 ժամ<br>Կրբաշյան Ա. 2 ժամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Պետրոսյան Հ. 2 ժամ |
| 2. | Խոսքային մեթոդով ծանոթացնել Արագածոտնի մարզի աշխարհագրական դիրքին, բնակլիմայական պայմաններին: | 6 | Հովհաննիսյան Լ. |
| 3. | Ծանոթացնել բնական հուշարձանների հետ և դրանց բնութագիրը քարտեզագրում, երթուղու մշակում: | 6 | Հովհաննիսյան Լ. 3 ժամ<br>Կրբաշյան Ա. 3 ժամ |
| 4. | Ծանոթացնել պատմամշակութային հուշարձանների հետ/Սբ.Աստվածածին/ : | 8 | Կրբաշյան Ա. 4 ժամ<br>Պետրոսյան Հ. 4 ժամ |
| 5. | Ամբերդ /Պահլավունիներ/ | 6 | Կրբաշյան Ա. 3 ժամ<br>Պետրոսյան Հ. 3 ժամ |
| 6. | Շրջագայություն Երևան-Արագածոտնի մարզ քայլարշավ Ամբերդ: | | |
| | **Գործնական** | 39 | Հովհաննիսյան Լ. 13 ժամ<br>Կրբաշյան Ա. 13 ժամ<br>Պետրոսյան Հ. 13 ժամ |